



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

899.962-1

G-72

19 NOV 1911

66.

1750m

ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Հրատարակութիւն և թարգմ. Զ. Կարապետեանի

899962.1

9-72
ար

№ 1.

Է. Ն Ի Ն Յ Օ Շ Ղ Ի Լ Ի
(ԻՆԳՕՐՕՂՎԱ)

Հ Ր Ա Մ Ա Ն

(ՊԱՏՄԻԱԾԲ)

ԵՐԵՎԱՆԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

1009
3406

Հեղինակի պատկերով, համաձայն կենսագր. և երկու նկարով:



ԹԻՖԼԻՍ

Արագածիկ «Էսպերանսո» ելիգաւեախիսկայա № 17
1911

11.07.2013

74.710



† ԷԳՆԱՏԷ ՆԻՆՕՇՎԻԼԻ

ԷԳՆԱՏԷ ԻՆԳՈՐՈՂՎԱ (ՆԻՆՕՇՎԻԼԻ)

Էգնատէ Ինգորովան հասարակ գիւղացու որդի էր: Նա ծնուել է 1861 թ. Չիլէթ գիւղում (Օգուրգէթի գաւառ): Վեց ամսական հասակում զրկոււմ է մօրից և այնուհետեւ նրան դաստիարակոււմ է հօրաքոյրը, որ հարազատ մօր նման խնամում է Էգնատէին և սովորեցնում նրան վրացերէն այբուբենը: Ապա Էգնատէին յանձնում են մի քահանայի, որ ազնուական ծագում ունէր: Սրանից Էգնատէն համարեա թէ ոչինչ չի սովորում, որովհետեւ ինքը քահանան ոչինչ չէր իմանում: Կէս տարուց յետոյ ազգականները նրան տարան Փոթի, յիշեալ քահանայի եղբոր որդու մօտ, որ պարապում էր փայտի առևտուրով: Փոթիում այդ վաճառականի մօտ Էգնատէն ամբողջ ինչը ամիս անցրեց ճաթ թիւելով և խոհանոցում աշխատելով: 1871 թուին, Էգնատէի հօրեղբայրը կրկին տանում է նրան իրանց գիւղը, ուր նա երբեմն ուսումնարան է գնում, բայց աւելի յաճախ իրանց ձիերն ու կովերն է արածացնում: 1876 թուականին հայրը յանձնում է նրան Օգուրգէթի հոգևոր դպրոցը, ուր Էգնատէն մեծ առաջադիմութիւն է ցոյց տալիս, բայց երկու տարուց յետոյ այդ դպրոցի աշակերտներն ընդհարումն են ունենում ուսուցիչների հետ և Էգնատէին էլ արձակում են դպրոցից՝ իբրև խռովարարների պարագլուխ: 1879 թուին Էգնատէն գնում է Գուլթալիս, որտեղ նա ձեռք է բերում ուսուցչական արտօնութիւն և գիւղական ուսուցչի պաշտօնով ուղարկւում է Գուրխա:

Էգնատէն չի բաւականանում այդքանով. նա ցանկանում է բարձրագոյն կրթութիւն ստանալ: Այդ միտքն իրագործելու նպատակով նիւթական միջոցներ ձեռք բերելու համար 1881 թ. թողնում է ուսուցչութիւնը և ընկերանում մի կապալառուի հետ Բաթումի երկաթուղային ճանապարհների վրայ. բայց այստեղ էլ բացի վնասից ոչ մի օգուտ չի ստանում: 1884 թ. Էգնատէն Թիֆլիզում գրաշարութիւն էր անում: Նա այստեղ էլ երկար չի

կարողանում մնալ, որովհետև բարձրագոյն ուսում ստանալու բուն ցանկութիւնը նրան հանգստութիւն չի տալիս: 1886 թ. ստանձնում է գիւղական գրագրի պաշտօն կրկին նոյն նպատակի համար՝ նիւթական միջոցներ գտնելու մտքով: Հէնց այդ ժամանակ նրա ընկերներից ոմանք նրան խորհուրդ են տալիս գնալ արտասահման ուսումը շարունակելու, խոստանալով իրանց օգնութիւնը: Որովհետև ընկերները խոստացած օգնութիւնը չեն կարողանում հասցնել, ուստի նիւթական միջոցների բացակայութիւնից սովամահ չլինելու համար էգնատէն մի քանի ամսից յետոյ կրկին վերադառնում է արտասահմանից: 1889 թ. նա Ռոտշիլդի Բաթումի գործարանն է մտնում, որտեղ աշխատում է իբրև հասարակ բանուոր: Սակայն նա չի կարողանում դիմանալ այնտեղի ծանր աշխատանքին, հիւանդանում է և վերադառնում հայրենիք: Առողջանալուց յետոյ նա սկսում է ծառայել Ղվիբլում Ն. Ղոզրէրիձէի մարզանէջի գրասենեակում, որտեղ Փիլիքապէս ուժասպառ է լինում և բոլորովին քայքայում է նրա առողջութիւնը:

Ինգորովանը 1891—92 թ. գրաւեց վրաց հասարակութեան օւշադրութիւնը, երբ «Իվերիա» լրագրում տպագրուեց նրա «Օտարտի հիւանդութիւն», «Սիրահարներ», Պօլիաստոմի լիճը», «Սիւմոնա», և «Քրիստինէ» աշխատութիւնները: 1892—93 թ. էգնատէն ապրում է Թիֆլիզում, բայց նրա առողջութիւնը բոլորովին խանգարուած էր արդէն, այնպէս որ բժիշկները նրան խորհուրդ են տալիս վերադառնալ կրկին գիւղ: Գիւղից գնում է Բաթում ծովային կլիմայում ապրելու, բայց այնտեղից էլ շուտով վերադառնում է տուն: Հետևեալ 1894 թ. ապրիլի 29-ին վախճանուեց բոլորովին մաշուած ու տանջուած՝ ճնշուածների ու տանջուածների այդ աղնիւ և անկեղծ բարեկամը:

Նինոզլիլու գրուածքների նիւթը վերցրած է չարքաշ գիւղացու կեանքից, նա իր գրուածքներում նկարագրում է գիւղացութշուառ դրութիւնը՝ ինչպէս օրէցօր ընկնում է և քայքայում նրա ընտանիքի հիմքը, թէ արտաքին և թէ ներքին հանգամանքներից:

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիանալի երեկոյ էր: Անսահման, կապոյտ երկնակամարը քաղցր և հանգիստ սրտով նայում էր դէպի կանաչազարդ ու գեղեցիկ երկիրը: մայիսեան թարմ օդը կենդանութիւն էր սփռում երկրիս վրայ: Ամբողջ օրը անդադար աշխատելուց յոգնած, կացիա Մունջաձէն վերադառնալով տուն՝ բահը դրեց մի անկիւնում ու նստելով դռան մօտի հողէ սաքուի վրայ ձայն տուեց կնոջը.

— Կեսարիա, ի սէր Աստծու, շուտ ընթրիք պատրաստիր: Սաստիկ յոգնածութիւնից բոլորովին հալից ընկել եմ:

Կացիայի փոքրիկ երեխաները լսելով իրանց հօր ձայնը՝ «Հայրիկը եկել է արտից», աղաղակելով իսկոյն դուրս թափուեցին անշուք անակից ու շրջապատեցին իրանց սիրելի հօրը: Փոքրիկներից մէկը նրա մի ծնկան վրայ նստեց, երկրորդը՝ միւս, իսկ երրորդը առջևը կանգնեց ու սկսեց հօր բեզերը քաջքշել: «Հայրիկ, կալմիլ սապրիկ բել», թոթովեց երկու և կէս տարեկան, կրտսեր տղան: Էգուց, էգուց կը բերեմ, գաւակս», խոստացաւ հայր իր փոքրիկ տղին ու փաղաքշանքով սեղմեց նրան իր քրտնաթոր և մերկ կրծքին: Հէնց այդ ժամանակ դռան շէմքում երևաց Կեսարիան, Կացիայի նորատի ու դեռ գեղեցիկ կինը:

— Մի քիչ էլ սպասիր, հոգիս, շուտով պատրաստ կը լինի ճաթը (սիմինդրի հացը):

Կեսարիան, տեսնելով իր ամուսնու պատառոտուն շապկի տակից երևացող արևակէզ ու բոլորովին քրոնաթաթախ մարմինը՝ աշխատեց, որքան կարելի է, ընթրիքը շուտով հասցնել, որպէսզի նա վաստակած մարմինը հանգստացնի:

— Ահ, քիչ մնաց մոռանայի, ասաց նա կնոջը, երեքշաբթի լուսաբացին ես ու Դաւիթը սայլով սիմինդր պիտի տանենք ծախելու: Սայլը Պետրոսից կը վարձենք, իսկ եզներից մինը իմը կը լինի, միւսը՝ Դաւիթին:

— Փառք Աստծու, այդ լաւ եղաւ, վերջապէս մեր երեխաների մերկութիւնը կը ծածկենք, ուրախացած բացականչեց Կեսարիան: — Հէնց մենակ Մարիամի խեղճութիւնը ինձ սպանում է. երէկ ամբողջ օրը լաց էր լինում ու ասում. «այս հասակի աղջիկ եմ և հազիս ամենեկին շոր չունիմ», դէհ, արի ու մի այրուի:

— Միթէ կարծում ես թէ սրանց թշուառութիւնը ինձ ևս չի վշտացնում: Եթէ Աստծով սիմինդրը երեքշաբթի մի քիչ լաւ գնով ծախեմ՝ բոլորին էլ կը հագցնեմ, մի դէյրացու էլ քեզ համար կը բերեմ, ասաց Կացիան. հաստատ համոզմունքով:

— Ես ոչինչ չեմ ուզում, դու հագիդ իսկի շապիկ չունիս: Եթէ երեխանց համար առնելուց յետոյ փող մնայ՝ մի շապկացու էլ քեզ համար առ, ասաց Կեսարիան ու մտաւ անշուք տնակը:

Մարիամը, Կացիայի մեծ աղջիկը, այս գրոյցի ժամանակ ներսից, դռան մօտ կանգնած, լսում էր ծնողների խօսակցութիւնը: Նա 10—11 տարեկան մի թուխ, գեղեցիկ ու գրաւիչ դէմքով աղջիկ էր, որին աւելի հրապուրիչ էին դարձնում նրա խոշոր ու սև աչքերը: Նրա հագի չթէ նեղ վերնազգեստը շատ հնանալուց դոյնը կորցրել էր և այնքան մաշուել, որ պատառուածքներից նրկատուում էր նրա մարմնի մերկութիւնը: Ամօթից՝ մինչև



Նկար Տ. Մանգլիճէի

Ինչքան անիրաւութիւններ են պատում խեղճ գիղացու զլխին...

(Երև 12)

իսկ ծնողների ներկայութեամբ ձեռներով ծածկում էր իր բաց մարմինը, իսկ հիւր եղած ժամանակ փախչում ու թաղնում էր տան յետևը: Մարիամի ուրախութեանը չափ չկար, երբ լսեց թէ իր հայրը սիմիոնը պիտի տանի ծախելու ու իր համար դէյրա պիտի գնէ:

Միւս երեք երեխաների մէկի մարմինը հազիւ ծածկուած էր շապկի ցնցոտիներով, իսկ մնացած երկուսը բոլորովին մերկ էին: Սրանք հանդատութիւն չէին տալիս հօրը՝ «Հայրիկ, ասում էին, ե՞րբ պիտի շապիկ առնես»: Մանաւանդ ամենափոքրը՝ ամեն Աստծու երեկոյ հարցնում էր Կացիային, երբ նա վերադառնում էր արտից. — «Հայրիկ, սապիկ բելի»:

Շատ անգամ էր պատրաստուել Կացիան, սայլով սիմիոնը տանել, ծախել և կնոջ ու երեխաների համար շորեղէն առնել, բայց միշտ արգելքների էր հանդիպել: Երբեմն եզանը ընկեր չէր գտնում (նա միայն մի եզն ունէր) երբեմն՝ սայլ, երբեմն անձրևն էր խանգարում ճանապարհ գնալու և երբեմն էլ մի այլ գործ էր պատահում: Հէնց այս պատճառներով էլ Կացիայի երեխաները մնացել էին մերկ: Այժմ նա հաստատ յոյս ունէր որ ոչ մի բան իրան չի արգելիլ ճանապարհ ընկնելու, որովհետև թէ եղանակը բարեյաջող էր և թէ ինքը պատրաստ: Այս հանգամանքը շատ էր ուրախացնում նրա ընտանիքին: Ամենքի դէմքի վրայ փայլում էր անսահման ուրախութիւն: Բաւական է մի աննշան յաջողութիւն խեղճ գիւղացու գործերում, որ նրա ամբողջ ընտանիքը լցուի ընդհանուր ցնծութեամբ:

Հէնց նոր էր սկսել Կացիան իր կնոջ և երեխաների հետ միասին ընթրել, որ յանկարծ դրսում մինը հագաց ու ձայն լուսեց. «էհէ, Կացիա»: — Այ Աստուած անիծի քեզ, բարկացած խօսեց Կացիան, դուրս գալով տնակից, երևի հիմա ճանապարհների վրայ բանելու կ'ուղարկեն:

— Գիտե՞ս, Կացիա, ինչի համար եմ եկել, ասաց զգի-

րը: Այսօր տանուտէրը յայտարարեց մեզ, որ «այս գիշեր երկաթուղով մի մեծ մարդ պիտի անցնի, որի համար երկաթագծերի վրայ հարկաւոր է պահապաններ կարգել», իմ բաժնից պիտի գնան ութ մարդ, դրանցից մինն էլ դու պիտի լինիս, ուրիշ ճար չկայ:

Երկաթուղուն մօտ գտնուող գիւղերից, երկաթագծերի վրայ պահապաններ նշանակելու այս կարգադրութիւնը վաղուց գոյութիւն ունէր: Այսպէս էր առաջին անգամ ոստիկանը յայտարարել երկաթուղու գծերին մօտիկ ապրող գիւղացիներին: «Որովհետև երկաթագծերի վրայ յաճախ գնացքը ընդհարում է ձեր տաւարին, այդ պատճառով էլ կամ պիտի պարիսպ շինէք ամբողջ գծի երկարութեամբ, կամ պահապաններ ուղարկէք հսկելու, որ տաւարը չկարողանայ անցնել երկաթուղու գծերի վրայից»: Գիւղացիները մերժեցին, պատասխանելով՝ «ոչ առաջինը կարող ենք կատարել և ոչ էլ երկրորդը»: Ոստիկանը չստիպեց գիւղացիներին ու այդպիսով կարծես այդ կարգադրութիւնն էլ չքայտու: Բայց մի քանի ժամանակից յետոյ, երբ երկաթուղու գնացքը ընդհարուեց, մի քանի վագոններ ջարդուեց և կոնգուկտորներն էլ վիրաւորուեցին՝ այն օրից տանուտէրը ստացաւ հետևեալ գրաւոր հրամանը. «Անպատճառ պահապաններ ուղարկել երկաթուղու գծերի վրայ, հակառակ դէպքում պատասխանատուութեան կ'ենթարկուես»: Մի քանի ամիս այս կարգադրութիւնը կատարում էր ամենայն ճշտութեամբ, բայց որովհետև այդպէս շարունակելը շատ դժուարութիւններ էր առաջ բերում, ուստի հետզհետէ մոռացութեան տուին: Պահապաններ ուղարկում էին միայն այն ժամանակ, երբ երկաթուղով պիտի անցնէր պետական մի բարձր պաշտօնեայ: Հէնց այս գիշեր գզիրը կանչում էր Կացիային, որովհետև պիտի անցնէր երկրիս «բռնաւորներից մէկը»:

— Այ մարդ, ասաց Կացիան գզրին, ինչի միշտ ինձ

մօտ ես գալիս: Օրէնքով այժմ ինձ չպիտի վիճակուէր պահպանութիւնը:

— Ի՞նչպէս թէ միշտ, պատասխանեց գզիրը: Մի՞թէ սրանից առաջ չէր որ բանելու հերթդ բաշխեցի:

— Չէ՛ որ դրա փոխարէն էլ քեզ արտումդ օգնեցի:

— Այս գիշեր կը գնաս երկաթուղու գծերի վրայ պահպանութիւն անելու, մի օր էլ իմ արտում կը բանես, իսկ դրա փոխարէն քեզ կ'ազատեմ յետոյ ամբողջ շաբաթ համայնական ճանապարհների վրայ աշխատելու պարտաւորութիւնից:

— Լա՛ւ, ի՞նչ կարող եմ անել: Կը գնամ այս գիշեր հսկելու, ասաց Կացիան բեղերի տակ ժպտալով— քանի որ մի ամբողջ շաբաթ բանելուց զուլին ազատեց: Այդ քիչ բան չի մենակ ու անօգնական զիւղացու համար:

— Տես, Կացիա, չխաբես, թէ չէ Միբիր կ'ուզարկեն քեզ էլ ու ինձ էլ, պատուիրեց գզիրը:

— Այ մարդ. երբ եմ խաբել քեզ, որ հիմա խաբեմ, պատասխանեց Կացիան:

— Ի՞նչ ասաց, հարցրեց Կեսարիան ամուսնու ներս մանելուն պէս:

— «Մեծ մարդ է անցնելու, ասում է, երկաթուղու գծի վրայ պիտի պահպան կանգնես»:

— Յետոյ ի՞նչպէս կարող եմ այդպէս յոգնած գրութեան մէջ:

— Դրա փոխարէն ճանապարհների վրայ բանելուց կ'ազատի, այդ փոքր բան չի մեզ համար:

— Այո՛, փոքր չի, այլ մեծ բան է, եթէ իրաւ ազատի:

— Մեծ է... Բայց այնպէս եմ շարդուած որ... Ասում էի կը գնամ, այս գիշեր մի կուշտ կը քնեմ ու կ'ազատուեմ յոգնածութիւնից: Էլ ինչ, հէնց այս գիշեր երևաց մեծ մարդն էլ ու ամեն բանն էլ...

— Ի՞նչ անեմ դժբաղդս, ասաց կինը կտրեկցաբար, երանի կարողանայի, ինքս կը գնայի քո փոխարէն:

— Ի հարկէ, լաւ էլ կը լինէր, եթէ գնայիր. այս գիշեր պահպաններին քիչ կը գուարճացնէիր, մեղք են, կը ձանձրանան, կատակելով խօսեց Կացիան:

— Է՛հ, հիմա սկսեցիր քո սովորական հանաքները, ես դրա մասին չեմ գանգատուում:

— Ինչ հարկաւոր է գանգատուել. եթէ նրանց բարութիւն ես ուզում անել, աւելի լաւ է առանց գանգատների լինի:

— Է՛լի շարունակեցիր քո սովորութիւնը, այ դու անպիտան, փաղաքշանքով պատասխանեց Կեսարիան ամուսնու կատակին:

Ընթրիքի վրայ նրանք երկար սկսեցին խօսել, թէ ինչքան սիմֆոնիկը կարող են ծախել ու ինչ պաւարաստութիւններ պիտի տեսնէին երեքշաբթի օրուայ ճոնապարհորդութեան և այլ բաների համար:

Ընթրիքը վերջանալուց յետոյ Կացիան անմիջապէս հրացանն ուսեց և իր սովորութեան համաձայն դիմելով կնոջն ու երեխաներին՝ «անթուև կացէք», ասաց ու գնաց:


«Ո՞ւր ես գնում, հայլիկ, կալմիլ սապիկ կը բելէս», ձայնեց նրա յետևից փոքրիկ տղան:

— Ի՛հ, ցաւ գայ նրանց մեծութեան, խօսեց Կեսարիան, յոգնած մարդը ո՞նց պիտի անքուն զիմանայ այս ամբողջ գիշերը:

Կացիան շատ էր պահպան եղել երկաթուղու գծի վրայ, այդ պատճառով էլ գիտէր թէ որտեղ պիտի լինէր: Նա հասաւ որոշեալ տեղը, հրացանն առաջը դրեց ու կանգնեց: Չանցաւ կէս ժամ՝ պարզ երկինքը լուսաւորուեց լիալուսնով, որ կամաց-կամաց բարձրանում էր լեռան յետևից: Նա իր աղօտ լոյսը հիանալի կերպով տարածում էր լուս երկրի վրայ: Հսկայական ծառերը անշարժ ստուեր-

ներ էին գցել իրանց շուրջը: Կարծես մի անյայտ էակ քաղցր նիրհում էր բնութեան անդորրութեան մէջ և այնպէս զիլ ձայնով դայլայլում ու սուլում էր սոխակը, որ թւում էր թէ «օրօր» է ասում լուսկեաց երկրին: Կացիան անշարժ կանգնած ակնապիշ նայում էր դէպի մի բլրամաս, որին լուսնի շողքը դեռ չէր կարողացել հասնել: Բոլորովին մտքովդ չանցկացնես, ընթերցող, թէ Կացիայի երևակայութիւնը գրաւուեց այս բանաստեղծական գիշերով ու նրա միտքը հանդիպելով մի կէտի այդպէս լարուած սկսեց նայել: Նա ոչ մի քաղցր յիշողութիւն չունէր, որի հետ կապ ունենար այս բանաստեղծական գիշերը. ոչ սիրունու գրկախառն համբոյրներ, ոչ կանաչագարդ դաշտերի վրայ գուարճալի ընթրիքներ, ոչ սիրային բացատրութիւններ և ոչ էլ այսպիսի այլ բաներ: Նա իսկի ժամանակ չի ունեցել այս տեսակ բաների մասին մտածելու, ինչպէս սիրունու հետ թե թեի տուած գրօնել, կամ զմայլուել բնութեան գեղեցկութիւններով և կամ լուսնեակ գիշերին սրտատրոփ սպասել իր սիրունուն: Կացիան բոմաններից ոչ մի հասկացողութիւն չունէր: Նրա սիրոյ պատմութիւնը այս էր. մի երեկոյ պսակուեց իր Կեսարիայի հետ ու սկսած այդ օրից միասին տանում են այս կեանքի ծանր լուծը: Եթէ նա մտաբերէր լուսնեակ գիշեր՝ այդ կապ կունենար բահի, գութանի, սայլի, գիշերային աշխատանքի ու այլ այսպիսի բաների հետ: Ուրեմն ինչ էին նշանակում Կացիայի ակնապիշ հայեացքը, ծանր ու դառն մտածմունքները:

— «Ի՞նչքան անիրաւութիւններ են պատուում խեղճ գիւղացու գլխին — ասում էր Կացիան, մտածմունքների մէջ ընկած. — Կնոջ, երեխանց կերակրի, փոշաին, վարժապետին, գրագրին վճարի, ձանապարհների վրայ բանելու ու պահապանութիւն անելու գնն, ամենի առաջ խնարհուիր, ամենին ծառայիր: Չէ, շատ փուշ է



Նկար Տ. Մամբեյի:

Կացիան քնած էր, գլուխը երկաթազծի վրայ դրած...
(Երես 15)

թշուառ գիւղացու կեանքը... Հիմա էլ մեծ մարդ է դա-
լիս... Երևի շատ մեծ մարդիկ կան աշխարհիս վրայ որ
այսքան ծառայութիւններ է հարկաւորուում... Մեծ մար-
դիկ... Գլբի խօսքին՝ թէ ով է անցնողը, ասել են. «Ինչ
քո գործն է». էլի որ ինչ մեր գործն է: Մեր գործն այն
է, որ երբ հրամայում են պիտի կատարենք, ապա թէ ոչ՝
Սիբիր կը քշեն... Երանի իմանամ ինչպիսի տեղ է այդ
Սիբիրը: Պիտի որ շատ վատ տեղ լինի... Արդեօք մեծ
մարդկանց չեն ուղարկում Սիբիր: Հըմ, ինչքան միամիտ
եմ ես: Մեծ մարդիկ ուրիշներին են ուղարկում, միթէ
իրանք իրանց կ'ուղարկեն: Ո՛րքան անտանելի է դժբաղդ
գիւղացու կեանքը: Վճարիր, ծառայիր, խոնարհուիր. իսկ
եթէ որ մի բանում սխալուեցիր, Սիբիր կը քշեն... Ար-
դեօք ինչ պիտի անէին մեծ մարդիկ, եթէ գիւղացիք չլինէին
աշխարհիս երեսին: Իրցուք ես, գիւղացիս, Սիբիրից չվա-
խենայի ու չգայի պահապանութիւն անելու... Հը՛մ, ինչեր
չի մտածի մարդս: Մի անգամ ասին զնն ու անմիջապէս
եկայ... Աստուած, ինչ տարօրինակ մտքեր են անցնում
գլխովս այս գիշեր: Աստեղ, Կացիան կանգ առաւ, նայեց
երկնքին ու շարունակեց՝ «բաւական ժամանակ է անցել,
գուցէ այս գիշեր ոչ ոք էլ չանցնի»: Յետոյ նա մտքով
անցաւ սայլով ճանապարհորդելուն. — «Ինչ լաւ յաջողուեց
գնալուս բանը: Եթէ այս առաւօտ Դուրթին չպատահէի,
գուցէ երեքշաբթի էլ չկարողանայի ճանապարհ ընկնել.
Իսկ այժմ Աստուծով, երեքշաբթի օրը, լուսաբացին սայլս
կը ճրճուացնեմ: Արտից գալով, քանի նայում էի կնոջս ու
երեխանցս՝ աչքերս լցում էին արտասուքով: Նշնելու
աղջիկս, Մարիամը իր մարմնի մերկութիւնը ձեռներով է
ծածկում: Երեսուն տարեկան մարդս, նրանց նայելով, մի
քանի անգամ քիչ է մնացել երեխայի պէս լաց լինիմ:
Այս երեկոյ էլ փոքրիկ տղաս յեակիցս կանչում է «Հայ-
րիկ, շապիկ բեր»: Տէր Աստուած օգնիր, որ ես կարողա-

նամ նրանց մերկութիւնը ծածկել:—Շաբաթ, կիւրակի,
երկուշաբթի և երեքշաբթի: Ընդամենը չորս օր է մնում»:
Շատ երկար սկսեց մտածել սրա վրայ Կացիան, թէ և
մարմնապէս ու հոգեպէս յոգնած, քնի սաստիկ կարիք էր
զգում, բայց քունը փախցնելու նպատակով սկսեց ման
ու ման անել:

«Ոչ ոք չի երևում այս անիծուած տեղը», մտմտում
էր նա ինքն իրան:

Շատ երկար սկսեց շրջել Կացիան:

Լուսինը արդէն թեքուել էր, գնացքը դեռ չէր երե-
ւում: «Անիրաւ քունս սաստիկ տանում է, քանի-քանի
անգամ քիչ մնաց ընկնէի: Առաւօտուանից մինչև երեկոյ
բանը ձեռիդ աշխատիր, այժմ էլ արի ամբողջ գիշեր լու-
սացրու. մարդ ինչպէս կարող է դիմանալ», ասաց նա
մտածմունքի մէջ ընկած ու աշխատեց քնին դիմադրել,
սակայն հանգստանալու պահանջը այնքան մեծ էր, որ
յանկարծ ամբողջ մարմնով թուլացաւ ու այլևս չկարողա-
ցաւ դիմանալ: «Արի, քիչ աչքիս խաբեմ, իսկ յետոյ ա-
ւելի արթուն կը հսկեմ», մտածեց նա, պառկելով, ու
հրացանը թևի վրայ դրեց, իսկ գլուխը երկաթուղու գծի
վրայ, մտածելով այսպէս, «բան է, եթէ գնացքն անցնե-
լու լինի, իսկոյն ձայնից կ'իմանամ ու կը վերթուչեմ»
և աչքերը փակեց: Կացիան քնած էր, գլուխը երկաթա-
գծի վրայ դրած, իսկ լիպուսինը կարծես շոյում էր նրա
գոգզած միջուքն ու բեղերը և սիրալիբ վերևից դիտում:
Սոխակն էլ իր ներգաշնակ ու զիլ ձայնով դայլայլում էր
ու կլկլացնում:

Հազիւ կէս ժամ անցած լինէր որ երկաթուղու գնաց-
քը երևաց: Նրա ոսկեղօծ վագոնները դիւթիչ կերպով
պսպղում էին լուսնի ²⁰²լայլոյ, ու անհամար վառուած մո-
մերի լոյսը պատուհաններին անցնելով միանում էին հրա-
շալի կերպով լուսնի լոյսի հետ: Վագոնների անիւնները

այնպէս անձայն սլանում էին, որ կարծես չէին ուզում Կացիայի քունը խանդարել: Ահա գնացքը մօտենում է նրան, Կացիան արագացրեց շնչառութիւնը. կարծես այս բոլորիս պիտի զարթնէր ու վերթուչէր: Բայց ոչ, նրան միայն երագում թւաց թէ վեր է թռչում: Կացիան տեսնում էր երագում, իբր թէ ինքը նկատեց հեռուից գնացքի մօտենալը ու յանկարծ վերթուաւ, հրացանը յարմարեցրեց և կանգնեց համարձակ. նրան թւում էր թէ մօտեցող գնացքը ամբողջովին ոսկով պատած է ու մէջը նստած են ոսկէ շորերով զարդարուած ու սափրած մօրուքով մարդիկ, որոնք սպառնալից կերպով նայում են իրան, որպէս թէ նրանք հասկացել են արդէն իր քնած լինելը. նա ուզում է նրանցից ներողութիւն խնդրել, բայց չի յաջողում, որովհետև լեզուն կապում է ու չի կարողանում շարժել»:

«Վնյ գլխիս, կնոջս ու երեխանցս կորցրի, իբր թէ ասում է ինքն իրան—Սիրելի կը քշեն»: Երևի այս երագն էր պատճառը, որ նրա շնչառութիւնը արգացաւ: Գնացքի անիւները սլացան երկաթագծերի վրայով, որի վրայ պառկած էր Կացիան ու շարունակեցին իրանց ճանապարհը...

Լուսաբացին երկաթուղու գծի պահապանը գտաւ մի մեռած մարդու դիակ, որի գլուխը բաժանուած էր մարմնից: Այդ Կացիա Մունշաձէի դիակն էր:



<< Ազգային գրադարան



NL0388894

79.710

